«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումը անհրաժեշտ է Սիսիան համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսակ նշանակության հողեր նպատակային նշանակության 0.0096հա այլ հողերից (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0132) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ:

Հողամասում առկա է << ԳԱԽ>> ՍՊԸ-ի կողմից ինքնակամ կառուցվել է ՀԷԿ-ի շենք: Սիսիանի համայնքի ղեկավարի 2018 թվականի հուլիսի 10-ի << Գոռ Բաբայանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ>> թիվ 484-Ա որոշմաբ կառուցված ինքնակամ շինության համար <<ԳԱԽ>> ՍՊԸ-ի տնօրեն Գոռ Սիմոնի Բաբայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ինքնակամ շինությունը օրինականացնելու, շինության սպասարկման հողամասը օտարելու համար, ինչպես նաև համայնքում առկա հողօգտագործումները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսակ նշանակության հողեր նպատակային նշանակության 0.0096հա այլ հողերից (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0132) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ:

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսակ նշանակության հողեր նպատակային նշանակության 0.0096հա այլ հողերից (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0132) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելուն հավանություն տալու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան